Ռեցիդի՞վ… այո՛

Ինչքան կարելի է նույն բանի մասին խոսել, առավել ևս՝ գրել, բայց անարդարացիորեն արդյունքի չհասնել։ Այո, այդ պատահում է այն ժամանակ, երբ անտարբերությունը և անպատասխանատվությունը ձեռք-ձեռքի տված իրականացնում են ռեցիդիվ, բառիս բուն իմաստով։

Մենք մի ժամանակ, ինչ-որ չափով սովորել էինք, որ հանրապետական, նաև մյուս թերթերում տպագրված քննադատական հոդվածները քննության առնվեն և արդյունքի մասին հայտնի դարձվեն ընթերցողներին։ Դեռ ավելին, այդ հարցում թերացողներին հրավիրում էինք պատասխանատվության։ Ահա կյանքի կառուցման այս շատ կարևոր լծակը իսպառ մոռացության է տրվել, և մենք կանգնել ենք կատարված փաստի առաջ, ոչ ավել, ոչ պակաս մեր մշակույթի խոշորագույն կոթողի՝ Զվարթնոց տաճարի, այսպես ասած, «մասնակի վերականգնման» գործում։

Առնչված լինելով մեր ճարտարապետության հուշարձանների բախտի, մասնավորապես, Զվարթնոց տաճարի վերակազմության և նրա վերականգնման հնարավորության հարցերի հետ, տագնապում եմ հետևյալ առիթով։ Հայտնի է, որ այդ հուշարձանի համար մեր դարի դեռևս առաջին տարիներին վերակազմություն է ստեղծել մեր արվեստի նվիրյալ, ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանը։ Իր ժամանակին նրա աշխատանքների նկատմամբ ուշադիր վերաբերմունք է ցուցաբերել պետերբուրգյան կայսերական ակադեմիայի համապատասխան բաժինը Անիի պեղումների հռչակված ղեկավար, ակադեմիկոս Նիկողայոս Մառի ներկայացմամբ։

Թ. Թորամանյանի աշխատությունների և չափագրությունների օգտագործմամբ ավստրիական համալսարանի համբավավոր պրոֆեսոր Հովսեփ Ստրժիգովսկին 1918 թվականին երկու մեծադիր հատորներով հրատարակում է «Հայ ճարտարապետությունը և Եվրոպան» աշխատությունը, որն իր հերթին մեծ ճանաչում է բերում մեր ժողովրդի շինարարական հանճարին։ Ի ամոթանք մեր արվեստի և ճարտարապե-

տության համապատասխան հաստատությունների, այդ կոթողային աշխատությունը անցած երեք քառորդ դարի (75 տարի) ընթացքում թարգմանաբար չվերահրատարակվեց, և մեր ընթերցողները անտեղյակ մնացին նրա հույժ կարևոր բովանդակությանը։

Ասելիքս այն է, որ Թորոս Թորամանյանի նման մեծ գիտնականի և նրա շնորհակալ գործի, կոնկրետ դեպքում՝ Զվարթնոցի վերակազմության նկատմամբ անպատշաճ վերաբերմունքը առնվազն… դատապարտելի է։

Հետամուտ Զվարթնոցի «մասնակի վերականգնման» գործընթացին, որ տևում է արդեն տասնյակ տարիներ (երկու հերթում), նկատվել էր, որ սխալ է կատարվել՝ պատի մի հատված 90 սմ-ի փոխարեն շարվել է 210 սմ հաստությամբ։ Այդպես էլ չհաջողվեց պարզել, թե այդ սխալի հեղինակը ով էր. ի վերջո, տարիներ անց հաջողվեց այդ սխալը շտկել։ Սակայն այդ սխալին հետևեցին նորերը. ահա դրա մասին էր մեր մի հոդվածը, որ «Հայաստանի Հանրապետություն» թերթը տպագրեց 1992 թ. սեպտեմբերի 11-ի համարում։ Դրանից մեկ տարի հետո՝ այժմ՝ 1993 թ. հոկտեմբերին կրկին անդրադառնում ենք նույն խնդրին։ Անհագստացողն անհանգստանում է, թերթը՝ տպագրում, իսկ սխալ գործողները շարունակում են իրենց նոր սխալները քարով ու շաղախով իրականացնել… Զվարթնոցում։

Հիշածս հոդվածը վերնագրված էր «Մեծ հուշարձանի երկրորդ կործանումը». այն, կարծում եմ, բավական էր, որ համապատասխան կազմակերպությունները իրար անցնեին, տեսնեին ի՞նչ է տեղի ունեցել։ Միավորված ազգերի կրթության, գիտության ու մշակույթի կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հովանավորվող հուշարձանների թվում միայն Զվարթնոցն է ընդգրկված, որպես համաշխարհային նշանակության կոթող։ Եվ ահա այդ հուշարձանի նոր կործանման մասին է ազդարարում ՀՀ Գերագույն խորհրդի օրաթերթը, բայց դրա կողքով անտարբեր են անցնում, այդ հարցը իրենց մոտ քննության առարկա չեն դարձնում ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությունը, Հայաստանի պատմության և

մշակույթի հուշարձանների պահպանության ընկերության խորհուրդը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժինը, Հայաստանի ճարտարապետների միության տեսության և պատմության սեկցիայի, ինչպես և Երևանի ճարտարապետական-շինարարական ինստիտուտի ճարտարապետության տեսության և պատմության ամբիոնը։ Այստեղ պետք է հիշատակենք նաև նյութը հրապարակող թերթի բաժնին, որը այս ընթացքում պարզապես ի վիճակի էլ չեղավ հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությունից ստանալ բացատրություն իրենց գործունեությանը հասցեագրված քննադատական հոդվածի կապակցությամբ։

Անդրադառնալով ամենակարևորին, տեսնենք այդ ինչ սխալների մասին է, որ հոդվածագիրը այսպես աղմուկ է բարձրացնում, մի ամբողջ շարք պաշտոնյաների անտարբերության մեջ մեղադրում։ Բանն այն է, որ հուշարձանում կատարվածը և կատարվողը չի կարելի լոկ սխալ համարել, դա մեր գնահատմամբ ավելին է, դա, ըստ էության, կանխամտածված գործողություն է, ուղղված ոչ մեր արվեստի օգտին։ Մենք գիտենք, որ Զվարթնոցում «մասնակի վերականգնման» անվան տակ ամեն գործողություն պետք է կատարվի Թորոս Թորամանյանի ճանաչված և պաշտոնապես ընդունված վերակազմության նախագծի սահմաններում։ Այն, ինչը իրականում արվում է, դեմ է այդ նախագծին։ Արվում է բազմիցս քննադատված և որպես վերակազմություն մերժված այն նախագծով, որը տարիներ առաջ ներկայացրել էր ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետական բաժնի այն ժամանակվա վարիչ Ստ. Մնացականյանը։

Այժմ հուշարձանում արվում է այնպես, ինչպես չպիտի արվեր։ Ցավալի է, որ տեղի է ունենում անթույատրելին. այդ այն է, ինչը օրենքով սահմանված է՝ որ եթե հուշարձանում որևէ հարց պարզ չէ, կամ վիճարկման առիթներ է տալիս, ապա այդ հանգույցին չի կարելի կպչել, մինչ, կոնկրետ դեպքում «մասնակի վերականգնողները» ոչ միայն կպչում են, այլ ձևափոխում են հենց այդպիսի հանգույցներ, և քանի որ պահպանված որոշ մասեր խանգարում են այդ ձևափոխություններին, մետաղյա

գործիքներով այդ մասերը քանդում են, համապատասխանեցնում իրենց նպատակադրմանը։ Սա արդեն ենթակա է երիցս դատապարտման։ Այսպիսի դեպքերում մեղավորները կանչվում են դատական պատասխանատվության, սխալը վերացնելուն ուղղված բոլոր միջոցառումների հետ կապված ծախսերը գանձվում պատասխանողից։

Տարիներ առաջ գոյություն ուներ հուշարձանների վարչության գիտամեթոդական խորհուրդ, որտեղ քննարկվում էին նման հարցեր. այժմ հայտնի չէ, գործու՞մ է այն, թե՞ ոչ, համենայն դեպս, խորհրդի նիստերին սովորաբար հրավիրվող «դրսի» մասնագետները անտեղյակ են այդ ամենին։ Չեմ կարծում, որ Կորյուն Ղաֆադարյանը կարդացած չլինի իր հոր՝ անվանի գիտնական Կարո Ղաֆադարյանի հրապարակված կարծիքը մնացականյանական «մասնակի վերականգնման» մասին, որ խիստ բացասական է (տես՝ Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), 1958, թիվ 7)։ Չեմ կարծում նաև, որ վարչության պետի տեղակալ Վ. Գրիգորյանը չգիտե Ստ. Մնացականյանի վերակազմության մերժված լինելու մասին։ Կարևորն այն է, որ վարչության ղեկավարները գործը վարում են, ըստ երևույթին, խորհրդատու ունենալով չնախընտրված վերակազության հեղինակին։ Արդյունքում տեղի է ունենում անթույլատրելի ռեցիդիվ՝ պետական ահագին միջոցներ են հատկացվում որոշակի մի բան անելու, արվում է մի ուրիշը։ Սրա համար ոմանք ամպայմանորեն պետք է կանչվեն պատասխանատվության։ Իսկ հուշարձանը, այնուամենայնիվ, պետք է փրկել, իրոք կործանումից, անմիջապես, առանց ժամանակ կորցնելու։

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀՀ վաստակավոր շինարար, ճարտարապետության

դոկտոր, ճարտարապետության համաշխարհային

բիենալեի (1991) դափնեկիր

«Հայաստանի Հանրապետություն», 3 հոկտեմբերի 1993 թ., էջ 6։